ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հունիսի 2020 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետը, 28-րդ հոդվածի 1-ին կետի «ը» ենթակետը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2010 թվականի հուլիսի 14-ի №365Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) 2020 թվականի ներդրումային ծրագրին՝ համաձայն №№1-3 հավելվածների:
2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Ընկերության 2020 թվականի ներդրումային ծրագիրը կազմում է 1 156,3 մլն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի՝ հետևյալ հիմնական ուղղություններով.

ա. համակցված շոգեգազային ցիկլով աշխատող թիվ 1 էներգաբլոկի GT13E2 MXL2-ի UPFLOW արդիականացում ՝ 955,5 մլն դրամ.

բ. ընկերության բնականոն գործունեության ապահովմանն ուղղված ներդրումներ՝ 7,3 մլն դրամ.

գ. 2019թ. համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ՝ 193,5 մլն դրամ.

2) սույն որոշման առաջին կետում նշված ներդրումային ծրագրի իրականացումից հետո ակնկալվող ցուցանիշները, մասնավորապես, 233,6 ՄՎտ տեղակայված (դրվածքային) էլեկտրական հզորությունը, կամրագրվեն Ընկերության

համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկում էլեկտրական էներգիայի (հզորության) և ջերմային էներգիայի համակցված արտադրության №0350 լիցենզիայի պայմաններում (այսուհետ՝ Լիցենզիայի պայմաններ) և հաշվի կառնվեն Ընկերության հետագա սակագների հաշվարկման ընթացքում, ինչի համար անհրաժեշտ է այդ ծրագրով նախատեսված աշխատանքները կատարելուց հետո Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգին համապատասխան դիմել Հանձնաժողով՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորող փաստաթղթեր.

3) այն դեպքում, երբ Ընկերության կողմից կատարվելու են օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն պահանջող աշխատանքներ, որոնք կհանգեցնեն կայանի՝ լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորության փոփոխության, Ընկերությունը Լիցենզիայի պայմաններում վերակառուցման ժամանակահատված ամրագրելու նպատակով պետք է դիմի Հանձնաժողով՝ ներկայացնելով Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի 48-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
հունիսի 2020թ.